

ԳԻԼԳԱՍԷԴԻ ԳԻՒՑԱԶՆԵՐԳՈՒԹԻՒՆԸ

ՏԱԽՏԱԿ ԻՆՆԵՐՈՐԴ

ՍԻՒՆԱԿ ԱՌԱՋԻՆ

1. — Գիլգամէշ իր զարհկամին՝ էնկի-զուին համար,
2. — կողքայ դառնորէն և կը թափառի անապատին մէջ.
3. — Եւրր ևս մեռնիմ, էնկիզուի նման պիտի չըլլամ.
4. — կսկիծը մտած է սիրտս.
5. — կը վախում մահէն և կը թափառի անապատին մէջ.
6. — զէպի Ուտնապիշտիմը՝ Ուրարա-Տուտուի որդւոյն
7. — ելած եմ ճամբայ և ճեպով պիտի երթամ իր մօտ.
8. — երբ կը հասնէի լեռնային կիրճերը գիշերով.
9. — կը տեսնէի առիւծներ և կը վախնայի,
10. — բարձրացուցի զուխս՝ Սինին ազօթեցի.
11. — իմ ազօթքները բարձրացան աստուածներու [...].
12. — [...] պահպանէ զիս:
13. — [Իշիբեր ան] կը պահէր և արթնացաւ երազէ մը.
14. — [...] կը ցնծայի կեանքով.
15. — առաւ իր տապարը իր ձեռքը,
16. — քաշեց [սուր] իր գօտիէն.
17. — Նե[տի(?)] մը պէս խոյացաւ անոնց միջև.
18. — հարուածեց [...] և (զանոնք) կտորներու վերածեց.
- 19-28. — (Այս տողերը չափազանց կըցկըտուր են թարգմանութեան համար),

(Սիննակին մնացեալը փշրուած է. Գիլգամէշ կը հասնի լեռնաշղթայի):

ՍԻՒՆԱԿ ԵՐԿՐՈՐԴ

1. — Լերան անունն է Մաշու.
2. — երբ կը հասնի Մաշու լեռը.
3. — որ հանազապորոյ կը հսկէ [արև]ածագին [և արեամուտին],
4. — որուն զագաթ(ները) կը հ[առնին] երկնքի կամարը,

5. — (և) որուն լանջը կը հասնի մինչև ստորերկրայ աշխարհը.
6. — կարիճ-մարդիկ կը հսկեն իր դրան մօտ.
7. — անոնք որոնց սարսափը տարկու է և որոնց ակնարկը՝ մահ.
8. — որոնց ստեղծութիւնը քննկէտ լեռները.
9. — որոնք արեւածագին և արեամուտին կը հսկեն արեւուն:
10. — Եւր Գիլգամէշ տեսաւ զանոնք, ահով
11. — և երկուզով նսեմացաւ.
12. — վերագտաւ իր հանդարտութիւնը և մօտեցաւ անոնց.
13. — կարիճ-մարդը կը կանչէ իր կնիւր.
14. — Եւն որ եկաւ մեր մօտ, իր մարմինը մարմինն է աստուածներու:
15. — կարիճ-մարդուն կնիւր կը պատասխանէ անոր.
16. — «Անոր երկու (երրորդը) աստուած է, մէկ երրորդը՝ մարդը:
17. — կա[րիճ-մ]արդը կը կանչէ անձը,
18. — ըսելով (այս) խօսքերը աստուածներու [զաւակին].
19. — «Ինչո՞ւ այսքան» երկար ուղևորութիւն [ես կատարած].
20. — [ինչո՞ւ հասած ես] իմ մօտ,
21. — [կտրելով ծովեր] որոնց անցքը դժուարին է.
22. — [նպատակը] քու [զա]ւուսն պիտի ուզէի զիտնայ:

(մնացեալը փշրուած է)

ՍԻՒՆԱԿ ԵՐՐՈՐԴ

- 1-2. — (փճացած):
3. — «Ուտնապիշտիմին՝ հօրս համար [եկած եմ],
4. — որ մտաւ [աստուածներու] ժողովին մէջ. (կեանքի փնտրտութիւն համար).
5. — կեանքի և մահուան մասին [պիտի հարցնէի].
6. — կարիճ-մարդը բացաւ իր բերանը [և ըսաւ].
7. — խօսելով [Գիլգամէշ]ին:
8. — «Ոչ ոք երած է, Իլիգամէշ, [որ կըցած է իրագործել ասիկա].
9. — ոչ ոք [կտրած] է լեռնային ուղիները.
10. — տասներկու փառսխ ներսը [...],

11. — թանձր է խաւարը և [ւոյս] չ[կայ] .
 12. — արեւածագին [. . .],
 13. — արեւմուտին [. . .],
 14. — [արեւ] յամուտին . . . ,
 15-20. — (Ֆեացեալը ֆլեռոտած) :

Ս Ի Խ Ն Ա Վ Զ Ո Ր Ր Ո Ր Դ

(սկիզբը փշրուած)

33. — «[Ըլլայ ան] վերտի [և տանջանքի] մէջ .
 34. — ցուրտի կամ [տաք] ի մէջ ,
 35. — հառահեղով [և արտասուելով, պիտի երթամ] :
 36. — [բաց] հիմա [լիբան դուռը] :
 37. — կարեւորագոյն [բացաւ իր բերանը և բաւ] :
 38. — Գիւղամէջ [. . .]
 39. — «Գնա, Գիւղա[մէջ . . .],
 40. — [. . .] Մաշուի լիւնները ,
 41. — [. . .] լիւնները (և) լիւն[նաշղթաները] ,
 42. — ապահով կերպով թող [. . .] .
 43. — լիբան դուռը [բաց է քցել] :
 44. — [ներք] Գիւղա[մէջ լսեց ասիկա] ,
 45. — [ուշադրութիւն ըրաւ կարեւորագոյն] խօսքին :
 46. — Արեւու ճամբու երկայնքին [զնայ(?)].
 47. — մէկ փարսախ մը [ճամբորդեց] ,
 48. — թանձր է խաւարը և [ւոյս չկայ] .
 49. — ոչ[ինչ] կրնայ [տեսնել իր առաջ և իր ետին] .
 50. — երկու փարսախ [ան ճամբորդեց] .

Ս Ի Խ Ն Ա Վ Զ Ի Խ Գ Ե Ր Ո Ր Դ

(սկիզբը փշրուած)

23. — Զորս [փարսախ ան ճամբորդեց] .
 24. — թանձր [է խաւարը և [ւոյս չկայ] .
 25. — ոչ[ինչ] կրնայ [տեսնել իր առաջ և իր ետին] .
 26. — հինգ փարսախ [ան ճամբորդեց] .
 27. — թանձր է խաւարը և [ւոյս չկայ] .
 28. — ոչ[ինչ] կրնայ [տեսնել իր առաջ և իր ետին] .
 29. — [վեց փարսախ ան ճամբորդեց] .
 30. — թանձր է խաւարը և [ւոյս չկայ] .
 31. — ոչ[ինչ] կրնայ [տեսնել իր առաջ և իր ետին] .

32. — եթէ փարսախ ճամբորդելէ վերջ [. . .],

33. — թանձր է խաւարը և [ւոյս] չ[կայ] .
 34. — ոչ[ինչ] կրնայ [տեսնել] իր [առաջ] և [իր ետին] .
 35. — ութը փարսախ [ան ճամբորդեց, և] կը պոռայ(?) ,
 36. — թանձր է խաւարը և [ւոյս չկայ] .
 37. — ոչ[ինչ] կրնայ [տեսնել] իր [առաջ] . [և] իր ետին .
 38. — ինը փարսախ ան ճամբորդեց և կը զգայ(?) հիւսիսային հողմը .
 39. — [. . .] իր դէմքը .
 40. — թանձր է խաւարը և [ւոյս չկայ] .
 41. — [ոչ[ինչ] կրնայ տեսնել] իր [առ] աջ [և] իր ետին .
 42. — [առսը փարսախ] [ուղև] ընկէ [վերջ] ,
 43. — [. . .] մօտ է .
 44. — [. . .] փարսախի .
 45. — [տանը մէկ փարսախ ուղեորեկէ վերջ կու] զայ դուրս արեւ[ծագէն] առաջ .
 46. — [տանի երկու փարսախ ուղեորեկէ վերջ] , [ւոյս է] .
 47. — [քարեր] ու պուրակը տեսնելով, կը մօտենայ . . .
 48. — սարդիոնը կը կրէ իր պտուղը .
 49. — որթեր գեղատեսիլ կը կախուին իրմէ .
 50. — լըլլաքաբը կը կրէ . . .
 51. — կը կրէ նաև հաճոյատեսիլ պտուղ :

Ս Ի Խ Ն Ա Վ Ե Յ Ե Ր Ո Ր Դ

(սկիզբը փշրուած)

- 24-36. — Այս ամբողջ տիւնակը չափազանց կցկտուր է թարգմանութեան համար .
 Ֆեացեալը ծայրատուած մասը նկարագրած ըլլալ կը թուի թանկագին քարերու պուրակը :
 37. — Սիգ[ուրին՝ գինետան աղախինը] , որ կը բնակի ծովեզրը .
 (Յիշատակարան)
 38. — [Տանը մէկերորդ] տախ[տակ] օվն որ տեսաւ ամէն ինչ ուրիշ, Գիւղա[մէջ] ի շարքէն .
 39. — Աշուրբանիպաղի ապարանքը .
 40. — աշխարհի թագաւոր, թագաւոր Ասորիստանի .

ՅԱԼՑԱԿ ՅԱՍՆԵՐՈՐԴ

Հին Բարեկան բնագիրը

(սկիզբը փշրուած)

1. — Ե...
2. — Անոնց մորթորով [կը զգեստաւորուի] (և) կ'ուսէ միս.
3. — ... Գիւղամէշ, որ երբեք չէ պատահած,
4. — [այնքան տառն որ (?)], իմ բռնքը կը քշէ ջուրերը:
5. — Շամաշ կը տանջուէր, գնաց անոր մօտ,
6. — (և) ըսաւ Գիւղամէշին.
7. — «Գիւղամէշ, ո՞ր կը վազես,
8. — կեանքը զոր կը փնտոնաւ պիտի չգտնես:
9. — Գիւղամէշ ըսաւ անոր՝ արի Շամաշին.
10. — «Բաւելէ (և) վազելէ վերջ արձակադաշտի վրայ,
11. — պիտի հանգչեցնեմ գլուխս գետինը,
12. — որպէսզի կարենամ քնանալ բոլոր տարիները.
13. — Թող իմ աչքերը տեսնեն արեւ որպէսզի կարենամ յագնել լոյսով.
14. — Խաւարը կը փարատի երբ լոյսը բաւարար է.
15. — ով որ մահով մեռած է, կարենայ տեսնել արեւուն լոյսը.

ՍԻՒՆԱԿ ԵՐԿՐՈՐԴ

(Սկիզբը փշրուած է. Գիւղամէշ կ'ուզէ իր խօսքերը գինեւան աղախին Սիդուրիին),

1. — «Ով որ գնաց իմ հետ բոլոր զըր- [կանքներու] ընդմէջէն,
2. — Էնկիդուս, զոր կաթողին կերպով կը սիրէի,
3. — որ գնաց իմ հետ բոլոր զրկանքներու ընդմէջէն,
4. — ան երթարկուեցաւ մարդկութեան ճակատագրին.
5. — տիւ և գիշեր ողբալի իր վրայ,
6. — չյանձնեցի զինքը թաղուելու, (խորհելով),
7. — բարեկամս պիտի ելլէ ի վերջոյ կոծէս վերջ.
8. — եօթը ցերեկ և եօթը գիշեր,
9. — մինչև որ որքը ինկաւ իր գէմքին վրայ.

10. — իր մեռնելէն ի վեր, կեանք չեմ գտնիր.
11. — որսորդի մը պէս թափառեցայ արձակադաշտին վրայ,
12. — արդ, ով գինեւան աղախին, որ կը տեսնեմ քու գէմքը,
13. — շտեմեմ մահը որմէ կը զարհուրեմ:
14. — Գինեւան աղախինը ըսաւ անոր՝ Գիւղամէշին.

ՍԻՒՆԱԿ ԵՐՐՈՐԴ

1. — «Գիւղամէշ, ո՞ր կը վազես,
2. — կեանքը զոր կը փնտոնաւ պիտի չգտնես:
3. — երբ աստուածները ստեղծեցին մարդկութիւնը,
4. — մահը սահմանեցին մարդկութեան,
5. — կեանքը վերապահեցին իրենց.
6. — դու, ով Գիւղամէշ, թող քու որդւոյնը ըլլայ լի.
7. — եղիր ցնծուն տիւ և գիշեր,
8. — թող հանապազօր ուրախութիւն ըլլայ.
9. — տիւ և գիշեր պարէ և խաղա.
10. — Թող քու հանգիստը ըլլայ մաքուր,
11. — քու գլուխը ըլլայ լուացուած, լողացիր ջուրի մէջ.
12. — զուգուրայ փոքրիկին վրայ, որ կը բռնէ քու ձեռքը.
13. — Թող կինը ուրախանայ քու ծոցին մէջ,
14. — այս է ճակատագիրը [մարդկութեան ...] օ:

ՍԻՒՆԱԿ ԶՈՐՐՈՐԴ

1. — Իր ցասումին մէջ զանոնք կը փճացնէ.
2. — կը վերադառնայ և վեր կ'ելլէ անոր մօտ.
3. — իր աչքերը կը տեսնեն Սուրսունաբուն.
4. — Սուրսունաբուն կ'ըսէ անոր՝ Գիւղամէշին.
5. — «Ըսէ ինծի, ի՞նչ է քու անունը,
6. — ես Սուրսունաբուն եմ, հեռաւորն Ուտնապիւրտիին պատկանող:
7. — Գիւղամէշ ըսաւ անոր՝ Սուրսունաբունին.
8. — «Գիւղամէշ է իմ անունը,
9. — որ եկած է Ուրուկէն՝ Անուի տունէն,
10. — որ կտրած է լեռները,

**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ
ՆՈՒԻՐՈՒՄԸ
ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՈՒՍՈՒՄԱՍԻՐՈՒԹԵԱՆ
ՕԲՍՅՈՐՏԻ ՄԵՋ**

Նոր Կտակարանի ուսումնասիրութեան նուիրուած Միջազգային Համագումար մը տեղի ունեցաւ Օքսֆորտի մէջ Սեպտեմբեր 11-15 (1961) օրերու ընթացքին, կազմակերպութեամբ Christ Church (Օքսֆորտ) աստուածաբանութեան փրօֆէսէօր Դոկտօր Crossի: Սոյն Համագումարը կը յաջորդէր 1957 Սեպտեմբերին կայացած այն Համագումարին՝ որ զբաղեցաւ Չորս Աւետարաններու ուսումնասիրութեամբ:

Ինչպէս միշտ, նաեւ այս անգամ Եւրոպայի բոլոր երկիրներէն, Ամերիկայի և Անգլիոյ յայտնի համալսարաններէն հրաւիրուած էին հեղինակաւոր փրօֆէսէօր-դասախօսներ, խօսելու և մասնական նիւթ դարձնելու համար Նոր Կտակարանի վերաբերեալ այլազան և մանրամասնեալ հարցեր, համաձայն կանխաւ պատրաստուած ծրագրի մը: Բաց աստի, 600է աւելի ունկնդիր-մասնակցողներ կային հնգօրեայ Համագումարին, մեծ մասամբ եկեղեցականներ՝ ներկայացուած Արեւելեան և Արեւմտեան բոլոր Եկեղեցիներէն — Հայց. Եկեղեցին ևս ունէր իր ներկայացուցիչը —, և մասամբ ալ համալսարանականներ՝ որոնք ուղղակի կամ անուղղակի կերպով կը հետաքրքրուէին Նոր Կտակարանի ուսումնաս-

տիրութեամբ: Համագումարը կը վայելէր հովանաւորութիւնը Քէնթըրպըրիի Արքեպիսկոպոս Դոկտօր Րէմզիի, որ կատարեց բացումը ներկայացնելով Քրիստոսի Չարաւանաց և Խաչելութեան դէպքերը ըստ չորս Աւետարանիչներու:

Ներկայ գրութեան նպատակն է տալ, կարելի մանրամասնութեամբ, համառօտ բովանդակութիւնը այն դասախօսութեանց և վերլուծութիւններուն՝ որոնց կարողացանք ներկայ ըլլալ և հետեւիլ: Համագումարի ծրագրին պիտի հետեւինք, սակայն անհրաժեշտ է նախ տալ ցանկը հետեւեալ տասը հիմնական հարցերուն՝ որոնց շուրջ կը դասնային բոլոր վերլուծական դասախօսութիւնները. —

1. Աւետարան ըստ Մարկոսի.
2. Հարցեր Յովհաննոս Գրութեանց վերաբերեալ.
3. Առաքելական Շրջանը.
4. Պօղոս Առաքեալի Ամսարանութիւնը.
5. Երբայցեոց Թուղթը.
6. Յակովբայ Առաքելոյն Թուղթը.
7. Քրիստոսաբանական Հարցեր. [նը.
8. Նոր Կտակարանի Վախճանաբանութիւն.
9. Նոր Կտակարանի Պարականոն Գիրքերը.
10. Պատմութիւն և Աւետարանները:

Օրական ծրագիրը կազմուած էր հետեւեալ ձևով. —

Ա. — Կէսօրէ առաջ.

1. Ս. Գրական ընթերցում և մեկնաբանութիւն.
2. Չորս դասախօսութիւններ՝ երկու խումբի բաժնուած.
3. Համառօտ ուսումնասիրութեանց հաղորդում հինգ համասեռ և յաջորդական ներկայացում, բաշխուած եօթը խումբերու վրայ:

Բ. — Կէսօրէ վերջ.

4. Ներկայացում տասը հիմնական հարցերու, հրեքական ստորաբաժանումներով, բաշխուած երեք օրերու վրայ.
5. Երկու յաջորդական դասախօսութիւններ:

ԲԵ. 11 Սեպտեմբեր.

Երկուշաբթի Համագումարին բացումը կատարեց Քէնթըրպըրիի Արքեպիսկոպոս Դոկտօր Րէմզի, որ Օքսֆորտի Համալսա-

11. — երկար ուղևորութիւն մը, արեւա-
[ձագէն].

12. — հիմա որ կը տեսնեմ քու դէմքը,
Սուրբունաբու,

13. — ցոյց տուր հեռաւորն Ուտնապիշ-
տի լըս:

14. — Սուրբունաբուն [ըսաւ] անոր՝ Գիւ-
գամէշին:

(Ճանցեալը փչրուած)

ԱՆՈՒՇԱՒԱՆ ՎՐԴ. ԶՂՋԱՆԵԱՆ
(Շարունակելի՝ 13)